«Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

“Informational Committee” Informational NGO

ք. Երևան, Բաղրամյան 28, հեռ. +374 41 463 626, էլ հասցե՝ press@infocom.am
28 Baghramyan Ave, Yerevan, Armenia, mobile: +374 41 463 626, email: press@infocom.am

16 հունիսի, 2025
ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Դավիթ Խուդաթյանին

«Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական ՀԿ
infocom.am լրատվական կայքի
լրագրող Սեդա Կյուրեղյանից
(քաղաքացիությունը՝ ՀՀ)

Հարցում

Հարգելի՛ պարոն Խուդաթյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ եւ 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության մինչև 2026 թվականը «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող՝ մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերանորոգվող 300 դպրոց ծրագրի շրջանակում, կառուցված կամ վերանորգված դպրոցների համար ներկայացրել է փոքրաթիվ դպրոցների վերակազմակերպման առաջարկ, որն ուղարկվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Խնդրում ենք տրամադրել առաջարկի պատճենը, վերակազմակերպվող/միավորվող դպրոցների ցանկը:
2. Արդյո՞ք Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Ուրասար, Ամրակից, Բովաձոր, Արմանիս գյուղերի դպրոցների միավորման կապակցությամբ գրություն է ուղարկվել Լոռու մարզպետարան: Եթե այո, խնդրում ենք տրամադրել գրության պատճենը:
3. Ուրասար, Ամրակից, Բովաձոր, Արմանիս գյուղերի դպրոցների միավորման նախագծի մշակումն ի՞նչ փուլում է:
4. Արդյո՞ք նախագիծն արդեն շրջանառության մեջ է:
5. Ի՞նչ նպատակով են օգտագործվելու փակվող դպրոցների շենքերը:
6. Ի՞նչպես է տնօրինվելու Ուրասար, Ամրակից, Բովաձոր, Արմանիս գյուղերի դպրոցների գույքը, այդ թվում՝ գրադարանային ֆոնդերը:
7. Արդյո՞ք այս գյուղերի աշակերտներին տրամադրվելու է անվճար տրանսպորտ փոխադրվելու համար: Կատարվե՞լ է արդյոք հաշվարկ, թե որքա՞ն կկազմի աշակերտների տեղափոխման տարեկան ծախսը:
8. Ըստ ՀՀ կառավարության՝ 2024 թվականի սեպտեմբերի 26-ի N 1503-Ա որոշման՝ «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Մոզրովի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպվել է՝ միացվելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Արփիի Վ. Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը»:
   Արդյո՞ք Մոզրով գյուղի աշակերտներին տրամադրվել է անվճար տրանսպորտ Արփի համայնքի դպրոց տեղափոխվելու համար:

Հարգանքով՝

Սեդա Կյուրեղյան

Էլ. հասցե՝ sedakyurexyana@gmail.com
Հեռ.՝ 098864490